«ՇԱՐԱՅԻ ՑՆՂԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ» ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՔՈՒՄ (Մ. Թ. Ա. VI—V ԴԴ.)

ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Մ. թ. ա. VI դ. Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան մասի ցեղերը հետզհետե համախմբվելով ստեղծել էին բավականին ուժեղ ցեղամիություններ։ Դրանցից մեկը կենտրոն ուներ հետագա Շիրակը, որի հնագույն բնակչության էպոնիմ-նախնին, նրա հավաքական կերպարի բանահյուսական անձնավորումն էր հայկազն Շարան։ Մ. Խորենացուն հասած հայկական հին ավանդազրույցների համաձայն, հենց վերջինիցս (և նրա զարմերից) էին սերած համարվում վաղ միջնադարյան Հայաստանի այս մասում (ինչպես նաև հարևան Գուգարքում) իշխած բուն հայկական ծագմամբ նախարարական տոհմերը[1]։

Բերենք Շարայի և նրա զարմերի մասին գոյություն ունեցած ավանդազրույցների՝ Մ. Խորենացու գրառած այն պատառիկները, որոնք ուշագրավ են մեր հոդվածում արծարծվող հարցերի պարզաբանման տեսանկյունից։

1) «Եւ (Արամայիսը) ղորդի իւր զՇարայ, ղյոլովածին եւ զշատակեր, առաքէ ամենայն աղխիւ իւրով ի դաշտ մի մօտաւոր, արգաւանդ եւ բերրի, յորում գնան ջուրք ոչ սակաւք, ի թիկունս հիւսիսոյ լերինն, որ անուանեցաւ Արագած. յորոյ անուն եւ զգաւառն ասեն անուանեալ Շիրակ։ Վասն որոյ թուի արդարանալ առասպելին, որ ասի ի մէջ գեղջկաց. «Թէ քո Շարայի որկորն է՝ ասեն, մեր Շիրակայ ամբարքն չեն»[2]։

2) «Իսկ Գուշարայ, որ որդւոցն Շարայի, ժառանգեաց զլեառն Մթին, որ է Կանգարք, եւ զկէս մասինն Ջաւախաց, զԿողբ, զՇոր, զՋոր, մինչեւ ցամուրն Հնարակերտ»[3]։

3) «Բայց զտէրութիւնն Աշոցայ, եւ զսեպհականութիւնն Տաշրաց կարգէ Վաղարշակ (արքան) ի զաւակացն Գուշարայ Հայկազնոյ»[4]։

Գ. Ղափանցյանն էր, որ մատնանշեց Շարա *(Շարայ) անձնանվան ծագումնաբանական կապը ոչ թե Շիրակ, այլ* Արշարունիք *(<Աշարունիք) գավառի անվան և վերջինիս հիմքում ընկած* Աշարունի *(Ա-շար-ունի) նախարարական տոհմանվան հետ*[5]։ *Աշարունի նախարարների տիրույթը՝ Արշարունիք գավառը, տարածվում էր Շիրակի և Արտքս գետի միջև, ներկայացնելով Շիրակից առանձին վարչական միավոր*[6]։ *Սակայն ավելի վաղ ժամա-*

---

1 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 39—40, 113։

2 Նույն տեղում, էջ 39—40։

3 Նույն տեղում, էջ 113։

4 Նույն տեղում։

5 Г. А. Капанцян, Историко-лингвистические работы, том II, Ереван, 1975, էջ 118—121։

6 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 40 և քարտեզը։

նակներում դրանք կազմում էին մեկ ամբողջություն (հիշենք, որ Կամսարական նախարարները կոչվում էին «տեարք Շիրակայ եւ Աշարունեաց»)։ Այս իսկ պատճառով, Շարայի կերպարը Շիրակում ունեցած տեղայնացմամբ հանդերձ, իր անվամբ աղերսվում է ոչ թե այս, այլ հարևան Արշարունիք (Ա-շար-ունի-ք) գավառի անվան հետ։

Բացի Շիրակից և Արշարունիքից «Շարայի զարմերը» բնակվել են նաև Նախիջևանում։ Նրանց նախիջևանյան հատվածի գոյության մասին է խոսում Շարուր գավառի անվան ստուգաբանությունը։ Վերջինիս կապակցությամբ Գ. Ղափանցյանը գրել է. «Կասկած չկա, որ Šar(a) էթնիկական անվանումից է կազմված հայկական Շարուր, Šarur գավառի անունը ևս... Ašaruni (kh) գավառի Šarur դաշտից ունեցած որոշ հեռավորությունը չի կարող արգելք հանդիսանալ ծագումնաբանական այսպիսի մեկնաբանության համար, քանի որ միևնույն ցեղի ճյուղերը հեշտությամբ կարող էին տարաբնակվել և հեռանալ»[7]։

Մեր կարծիքով, Շիրակ-Արշարունիքում և Շարուր-Նախիջևանում ժամանակին բնակված šara -յաններին («Շարայի զարմերին») է վերաբերում Ստրաբոնի միջոցով մեզ հասած հետևյալ կարևոր տեղեկությունը. «Ասում են, որ նաև թրակացիներից ոմանք, որ անվանվում են սարապարներ, այսինքն՝ գլուխ կտրողներ (κεφαλότομοι)[8] ապրում էին Արմենիայից վերև և հարևան էին գուրանիացիներին (Γουράνιοι) և մեդացիներին»[9]։

Մի կողմ թողնելով սարապարներին թրակացիներ համարելու մասին Ստրաբոնի թեական կարծիքը, փորձենք, նախ, պարզել, թե ինչ է նշանակում «Արմենիայից վերև» արտահայտությունը։ Հայտնի է, որ մ. թ. ա. VI դ. վերջից (հավանաբար, 520 թ.) սկսած Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեին աքեմենյան երկու սատրապություններ՝ 13-րդը (արմենականը) և 18-րդը (մատիենա-սասպեյրա-ալարոդյանը)։ Սրանցից առաջինը ներառում էր լեռնաշխարհի հարավ-արևմտյան, իսկ երկրորդը՝ հյուսիս-արևելյան կեսը։ «Արմենիայից վերև» արտահայտության պարզաբանման տեսանկյունից ուշագրավ է Հայկական լեռնաշխարհի ցեղերից մեկ ուրիշի՝ այնիանների, վերաբերյալ նույն Ստրաբոնի թողած հետևյալ տեղեկությունը. «Պատմում են, որ այնիանների մի մասը բնակվում է Ուիտիայում, իսկ մյուս մասը Արմենիայից վերև՝ Աբոսի ու Նիբարոսի հետևում (սրանք Տավրոսի մասերն են), որոնցից Աբոսը մոտ է այն ճանապարհին, որ տանում է Բարիսի տաճարի մոտով Եկբատանա»[10]։

Ինչպես ժամանակին մատնանշել է Ն. Ադոնցը, հիշյալ լեռները լինելու են կամ Հայկական Պարլեռները, կամ նրանց ամենաբարձր զույգ գագաթները՝ Մեծ ու Փոքր Մասիսները[11]։ Հենց Հայկական Պարն էր մ. թ. ա. V դ.

---

7 Г. А. Капанцян, նշվ. աշխ., էջ 122։

8 Σαραπαρας ցեղանվան «գլուխ կտրող» (հուն. κεφαλότομοι) ստուգաբանության ոչ գիտական լինելու վերաբերյալ տե՛ս Ս. Գ. Պետրոսյան, Թրակա-կիմերական ցեղերի միությունները Հայկական լեռնաշխարհում (մ. թ. ա. VI—V դդ.), («Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 1, էջ 211)։

9 Strabo, XI, 14, 14 (Հ. Մանանդյան, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, Երևան, 1944, էջ 11)։

10 Strabo, նույն տեղում (Հ. Մանանդյան, նշվ. աշխ., նույն տեղում)։

11 Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 320, ծան. 3, նույնի, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, էջ 57։

միմյանցից սահմանազատում Աքեմենյան աշխարհակալության հայկական երկու սատրապությունները՝ 13-րդը և 18-րդը[12]։ Քանի որ բերված հատվածների «Արմենիա»-ն 13-րդ (արմենական) սատրապությունն է, ուստի «Արմենիայից վերև» ասելով Ստրաբոնը (ավելի ճիշտ, նրա աղբյուրը) հասկանալու էր 13-րդ սատրապությունից «վերև», այսինքն՝ Հայկական Պար լեռնաշղթայից այս կողմ ընկած հողերը։

Ն. Ադոնցը, Հ. Մանանդյանը, Ս. Երեմյանը այնիաններին ու սարապարներին տեղադրում են Վանանդում և Շիրակ-Արշարունիքում[13]։ Սրանց այսպիսի տեղադրումը հավանական է նաև նրանով, որ Ստրաբոնի «վերև»-ը ὑπερ| ոչ միայն «արևելք» է նշանակում, այլև «հյուսիս-արևելք» և, անդամ, «հյուսիս»։ Այս նույն իմաստներով է, օրինակ, նա գործածում «վերև»-ը, երբ խոսում է Սև ծովից և Կովկասյան լեռներից հյուսիս ձգված տափաստանների մասին[14]։

Այնուամենայնիվ, իրավացի էր նաև Գ. Ղափանցյանը, երբ šara-յաններին (մեր պատկերացմամբ՝ նույն սարապարներին) տեղադրում էր ոչ միայն Շիրակ-Արշարունիքում, այլև Շարուրում։ Ըստ այսմ, եթե «Արմենիայից վերև» ապրող սարապարների մասին Ստրաբոնի հաղորդումը վերաբերում է նրանց Շիրակ-Արշարունիքի հատվածին, ապա «դուրանիացիների Γου ρανιοι) և մեդացիների (մարերի—Ս. Պ.) հարևանությամբ» բնակված սարապարների մասին Ստրաբոնի հաղորդումը վերաբերելու է նրանց Շարուր-Նախիջևանի հատվածին[15]։ Վերջինիս առթիվ ուշագրավ է ինչպես այն փաստը, որ մարերի (մեդացիների) ցեղերը բնակվում էին անդրարաքսյան շրջաններում, այնպես էլ Հ. Կարագյոզյանի այն համոզիչ հետևությունը, թե «...այս գուրանիացիները (Γουρανιοι), որոնք միաժամանակ միդիացիների հարևաններն էին, կարող էին լինել միայն սեպագիր աղբյուրների՝ ուրարտ. KUR Guria, աքադ. KUR Guriania երկրի բնակիչները»[16]։ Իսկ ուրարտական

12 Հայկական Պար լեռնաշղթային հարավից հարող Արածանիի վերին հոսանքի շրջանը թե՛ Լեոն, թե՛ Հ. Մանանդյանը համարում էին Արմենիայի, այսինքն՝ արմենական (13-րդ) սատրապության, հյուսիս-արևելյան ծայրամասը (Լեո, Երկերի ժողովածու, հ. I, Երևան, 1966, էջ 256, Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երևան, 1944, էջ 64, 66)։

13 Ն. Адонц, նշվ. աշխ., էջ 56—57, Հ. Մանանդյան, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, էջ 12—13, Ս. Տ. Երեմյան, Կիմերական և սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ («Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2, էջ 91)։

14 Д. А. Мачинский, Некоторые проблемы этногеографии восточноевропейских степей во II в. до н. э.—I в. н. э. («Археологический сборник», т. 16, Л., 1974, էջ 124)։

15 Հմմտ. նույն Ստրաբոնի հաղորդումը (Strabo, XI, 14, 14) այնիանների երկու հատվածների վերաբերյալ. մեկը «Ուիտիայում» (ըստ Հ. Մանանդյանի՝ Ուտիքում, «Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին», էջ 11, 13), մյուսը՝ «Արմենիայից վերև՝ Արոսի և Նիբարոսի հետևում» (ըստ Հ. Մանանդյանի՝ Շիրակում և Վանանդում, նույն տեղում, էջ 12, 13)։ Սարապարների (šara-յանների) երկու հատվածների գոյության փաստից ելնելով, կարելի է զուգահեռներ անցկացնել Շիրակ-Արշարունիքի և Շարուր-Նախիջևանի մի շարք տեղանունների միջև։ Այսպես օրինակ. Quriani երկրանունը կարող է ծագումնաբանական կապի մեջ լինել Guria (Guriania) երկրանվան հետ, Guluta-ի երկրանունը՝ Գողթ-ն գավառանվան, Արփա լճանունը՝ Արփա գետանվան (նաև Արփանեալ և Առփազեղ տեղանունների)։

16 Հովհաննես Կարագյոզյան, Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1978, № 10, էջ 66)։

և ասորեստանյան արձանագրություններում հիշատակված վերջին անվանումների տակ թաքնված է Որոտան գետի ավազանը բռնած այն երկիրը, որն ընդգրկում էր իր անունը պահած ներկայիս Գորիսի շրջանը ևս[17]։

Ըստ երևույթին, Guria, Guriania, Գորիս տեղանունների և նույնածագում Γουράνι-ου ցեղանվան (կամ էթնիկոնի) հիմքում պետք է տեսնել հ.-ե. *gu̯or- («լեռ»>«ժայռ») արմատը, որը, ինչպես նաև նրա *gu̯er-տարբերակը, պահպանված են ազգակից լեզուների հետևյալ բառերում. հին հնգկ. giríṣ «լեռ», ավեստ. gairi «լեռ», հուն. οἶρος «բլուր», ալբան. gur «ժայռ, քար», ռուս. гора և այլն[18]։ Այս նույն արմատից է ծագած համարվում նաև Հեսիքիոսի ավանդած Γυράς լեռնանունը և Γυραί ժայռանունը, որոնց համար վերականգնում են հին բալկանյան ծագմամբ *guras («լեռ», «ժայռ») նախաձևը[19]։ Թերևս, նույն ծագումն ունի հայերեն գորխ «քարակույտ» բառը[20], Հիշյալ հատուկ անուններին մեր տված ստուգաբանության առթիվ հիշենք Գորիսի գոգավորության «...ձախ լանջին գտնվող քարե բուրգերի ու սյուների «անտառը»[21]։

Շարա և սարապար զույգի փոխադարձ կապի մասին է վկայում ոչ միայն աշխարհագրական միջավայրի նույնության, այլև լեզվածագումնաբանական ակնհայտ աղերսի գործոնը։ Σαράπαρας ցեղանունը, հավանաբար, հունական տառադարձությունն է տեղական *շարապար-ի (հունարենը շ չունի և օտար բառերի այդ հնչյունի դիմաց դնում է իր u-ն), իսկ վերջինս, մեր կարծիքով, պետք է տրոհել շարա և պար բաղադրիչների։ Սրանցից առաջինը նույն Շարա (Շարայ) անձնանունն է, իսկ երկրորդը կարող ենք ենթադրաբար ծագած համարել կամ հ.-ե. *per- «ծնել» արմատից (հմմտ. լատիներեն pario «ծնել», parens «ծնող» բառերը և թրակյան Παρις, Παρος, Zi-parus անձնանունները)[22], կամ հ.-ե. pu̯er «տղա, որդի» բառից (հմմտ. լատիներեն puer «երեխա, տղա, որդի», դակերեն per «տղա, որդի»)[23]։ Ըստ այսմ, *շարապար >Σαράπαρ(ας) նշանակելու է «Շարայածին» կամ «Շարայորդի» (հմմտ., օրինակ, Հայկ և Հայկազն, Արամ և Արամազնեայք)։

Ամենայն հավանականությամբ, šara -յանների (սարապարների) ինչպես Շիրակում և Աշոցքում, այնպես էլ Շարուրում ունեցած երբեմնի բնակության հետևանքը պետք է համարել Արփա ջրանվան գոյությունը թե՛ մեկում և թե՛ մյուսում։ Հայտնի է, որ այժմ էլ Արփա (Արփալիճ), և ոչ թե Արփի, է կոչվում այն փոքրիկ լիճը, որից սկիզբ առնող և Ախուրյան (հին

---

17 Նույն տեղում, էջ 65, հմմտ. Г. А. Меликишвили, Наири-Урарту, Тбилиси, 1954, էջ 281։

18 М. Фасмер, Этимологический словарь русского языка, т. I, М., 1964, էջ 438, «Этимологический словарь русского языка», т. I, вып. 4, М., 1972, էջ 129։

19 В. П. Нерознак, Палеобалканские языки, М., 1978, էջ 181։

20 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. I, Երևան, 1971, էջ 583, Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. I, Երևան, 1944, էջ 461։

21 «Վերջինս մոխրագույն, կարմրագորշ ու սև հրաբխային ապարների հողմահարման արդյունք է, չրի, քամու և արեգակի տաշած ու քանդակած յուրօրինակ ու ֆանտաստիկ մի քմահաճ լաբիրինթոս» («Սովետական Հայաստան», 1979, № 6, էջ 33)։

22 Գ. Բ. Ջահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970, էջ 56։

23 В. И. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, էջ 122, 128։

առումով) թափվող գետը ևս կոչվում է Արփա (Արփաչայ)։ Դարձյալ Արփա (Արփաչայ) է կոչվում Շարուրում Արաքսը թափվող այն գետը, որի ափին է տեղադրվում Ծղիշեի հիշատակած Արփանեալ ավանը[24]։ Թե՛ սրանք, թե՛ Քսենոփոնի հիշատակած հայկական "Ἅρπασος" գետանունը կարող էին ծագած լինել հ.-ե. *āpra — (< āp- «ջուր»+ra մասնիկ) նախաձևից[25]։

Շիրակում և հարակից շրջաններում հին հնդեվրոպական ցեղերի վաղեմի բնակության տեսանկյունից ուշագրավ են տեղի մյուս աշխարհագրական անվանումները ևս։ Դրանցից կանգ կառնենք հատկապես Արագած և Արտին լեռնանունների վրա, որովհետև գետանունների նման լեռնանունները ևս (և աշխարհագրական խոշոր օբյեկտների անուններն առհասարակ) աչքի են ընկնում իրենց համեմատական կայունությամբ։

Արագած լեռնանվան Գ. Ղափանցյանի առաջարկած «Արայի գահ» ստուգաբանությունը անընդունելի է նախ և առաջ նրանով, որ ի տարբերություն, ասենք, Դաշտն Արայի (Արարատյան դաշտ) և Լեառն Արայի (Արայի լեռ) կոչված օբյեկտների, Արագած լեռը Արայի պաշտամունքի և անվան հետ ոչ մի առնչություն չունի։ Պատահական չէ, որ Մ. Խորենացին նրա անունը բխեցնում է Արամանյակի անունից[26], դրանով իսկ վկայելով մեր լեռան Արամանյակի պաշտամունքի երբեմնի կենտրոններից մեկը լինելու օգտին (օրինակ, Արմավիրի սոսիների պուրակի նման)[27]։ Գ. Ղափանցյանի տված «Արայի գահ» ստուգաբանությունն անընդունելի է նաև հնչյունական անցումների անհամապատասխանության տեսանկյունից։ Ըստ նրա, Արագած<Արա+գած (<Արա դիցանուն+գած «գահ»)։ Ընդ որում, նրա կարծիքով, գած<ուրարտա-շումեր. guza, gutsa (դուծա) կամ միջին պարս. gās (gāv)[28]։

Մեր կարծիքով, Արագած լեռան անունը պետք է բաժանել Արագ- և -ած բաղադրիչների, դրանցից առաջինի համար վերականգնելով *rag- (հայերենի օրինաչափությունների համաձայն սա վերածվել է *արագ-ի), իսկ երկրորդի համար՝ -at (>-ատ>-ած) նախաձևերը։ Նախ, *rag- (>Արագ-) արմատի մասին։ Ըստ երևույթին, իր ծագմամբ սա նույնական է սլավոնական նախալեզվի rogъ (որից ռուս. рог), լիտվերեն rãgas, լատիշերեն rags, հին պրուսերեն ragis «եղջյուր» և օսերեն ragˇəen «կախիչ», (<«եղջյուրե

[24] Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 69 (Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 41). հմմտ. «...ի Վայոց ձոր յԱռփանեալ» («Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», Մոսկվա, 1861, էջ 251)։

[25] Xen., Anab., IV, VII, 18։ Այս *āpra նախաձևից են ծագած համարվում ինչպես բաղաձայնների նույնատիպ դրափոխության ենթարկված օսերեն arf «(ջրային) խորություն» բառը, այնպես էլ Դնեպր, Δάναπρις (<*dān—āpr «խոր գետ) գետանվան երկրորդ բաղադրիչը (տե՛ս В. И. Абаев, Историко-этимологический словарь осетинского языка, т. I, М.—Л., 1958, էջ 63)։

[26] «Յայսմ խորութեան դաշտի բնակեալ Արամանեակ՝ շինէ զմասն ինչ ի հիւսիսոյ կողմանէ դաշտին, եւ զոտն լերինն ի նոյն կողմանէ, եւ զլեառնն անուանէ յանկազոյն յիւր անուն Արագած, եւ զկալուածն՝ ոտն Արագածոյ» (Խորենացի, էջ 39)։

[27] «...Սօսին Արամանեկայ որ յԱրմաւիր. զորոյ զսաղարթուցն սօսաւիւն, ըստ հանդարտ եւ կամ սաստիկ շնչելոյ օդոյն, եւ թէ ոստի շարժումն՝ սովորեցան ի հմայս յաշխարհիս Հայկազանց, եւ այս ցբազում ժամանակս» (Խորենացի, էջ 64)։

[28] Գր. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1945, էջ 98—99։

կախիչ»<«եղջյուր») բառերի հետ[29]։ Այսպես ենք կարծում, նկատի առնելով ոչ միայն առկա հնչյունական օրինաչափ համապատասխանությունները, այլև հետևյալ հանգամանքները.

1) Այդ մասին են խոսում համապատասխան բառերի իմաստային զարգացումները ազգակից լեզուներում։ Հմմտ. ռուս. роговина «լեռնաշղթա, հրվանդան», роговье՝ նույնը, լիտվերեն raguvà «կիրճ, խորաձոր», «սարալանջ, զառիվայր»[30]։

2) Այդ է վկայում նաև հնագույն պաշտամունքային ոլորտներից եկող «լեռ»—«եղջերավոր էակ» (հատկապես «ցուլ») իմաստային կապը։ Հմմտ., օրինակ, Եղջերք և Եղջիւր Խոյի, Ցուլն և Ցլու գլուխ լեռնանունները հին Հայաստանում[31]։ Հայկական ավանդություններից մեկի համաձայն Արտոս և Առնոս լեռները եղել են Տավրոսի զույգ եղջյուրները (հմմտ. Ταῦρος լեռնանունը և հուն. ταῦρος «ցուլ» բառը), իսկ Տավրոսն ու Զագրոսը «...առաջ եղջյուրներով վիշապ են եղել»[32]։

3) Պետք է նկատի առնել, որ քառագագաթ Արագածը մեր հեթանոս նախնիների աչքին երևալու էր այնպիսի մի գերբնական եղջերավոր էակ (վիշա՞պ), ինչպիսին երևում էին նաև վերոհիշյալ լեռները։

Ինչ վերաբերում է Արագած լեռնանվան երկրորդ -ած, բաղադրիչին, ապա, ինչպես ասվեց, նախապես նա կարող էր ունենալ -ատ (<at) տեսքը։ S=ծ համապատասխանությունն առկա է նաև իրենց հիմքում նույնական հայերեն այնպիսի բառերում, ինչպիսիք են. խայտ և խայծ, տխեղտ և տխեղծ, բուտ և բուծ- (հմմտ. բուծանեմ), պարտ և պարծ- (հմմտ. պարծեմ), մուտ և մուծ- (հմմտ. մուծանեմ) և այլն[33]։ Ըստ երևույթին, այս բաղադրիչը իմաստով նույնն է հայերենի -ատ վերջածանցի հետ (հմմտ. արմատ, հաստատ, հեղեղատ, հավատ, հրատ և այլն)[34]։ Վերջինիս և ռուսերեն -ат- ածանցի համապատասխանության վերաբերյալ Գ. Ղափանցյանը գրում էր. «...-ատ (-վոր, -ունա, -կրող) իմաստով, ինչպես խանդաղատ, խանձատ, աղքատ, ֆնատ («бабник») և այլն (=վրաց. -adi, bel -adi «առաջնորդ» mçvadi «խորոված» և այլն, ռուսաց -ат-: Крылатый, усатый, богатый և այլն)»[35]։ Այսպիսով, Արագած (<*rag-at) լեռնանունն ամբողջությամբ նշանակում է «եղջերավոր, եղջերակիր» (=рог-ат-ый):

Լեռների և եղջերավոր (գերբնական) էակների դիցաբանական-առասպելաբանական նույնացման փաստից ելնելով, պետք է ստուգաբանել հա-

---

29 М. Фасмер, Этимологический словарь русского языка, том III, М., 1971, էջ 489, В. И. Абаев, Историко-этнмологический словарь осетинского языка, М.—Л., т. II, 1974, էջ 345։

30 М. Фасмер, նշվ. աշխ., հ. III, էջ 490։ Լիտվերեն raguvà (հայց. raguvą բառի «կիրճ, խորաձոր» իմաստը հնարավոր է դարձնում սրանց հետ միասին միևնույն շարքում դասելու նաև Արազվի («Աշխարհացույց»-ում Արազ) գետանունը։ Իմաստի զարգացման տեսանկյունից համեմատելի են հայկական Անձախի ձոր, Ծանախոյ ձոր, Ձորագետ գետանունները (Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 36, 38, 56, 63)։

31 Հ. Հյուբշման, Հին հայոց տեղվո անունները, Վիեննա, 1907, էջ 260—261։

32 Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 23—24։

33 Г. Б. Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, էջ 302—303։

34 «Հայոց լեզվի պատմական քերականություն», հ. II, Երևան, 1975, էջ 75—76։

35 Գ. Ա. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, հին շրջան, Երևան, 1961, էջ 175։

բայ-արեելյան Շիրակի Արտին *(Արտենի)*[36] *լեռան անունը եւ։ Հայերենի օրինաչափությունների համաձայն* Արտին-*ը ստացվել է նախնական* *dren-*ից՝* dr->rd->արտ- *անցումով*[37]*։ Այս նախնական* *dren-*ը պետք է առնչել մի կողմից թրակերեն* Δρενις *(«եղջերու, եղնիկ») անձնանվանը, մյուս կողմից ալբաներեն* dreni *նույնիմաստ բառին*[38]*։ Իմաստային զարգացման տեսանկյունից հմմտ. Եղնախաղ (Վանանդի և Աշոցքի միջև) և Եղնասար (Արցախի և Ուտիքի միջև) լեռնապարերի անունները, որոնց առաջին բաղադրիչները նույնական են հայերեն* եղն *«էգ եղնիկ» բառին*[39]*։*

Բացառված չէ, որ šara *-յանների (սարապարների) գլխավորած հնդեվրոպական-վաղհայկական ցեղերի միության մեջ ընդգրկված է եղել նաև Արարատյան դաշտի բնակչությունը, քանի որ դաշտն ինքը տարածված էր Շիրակ-Արշարունիքի և Շարուր-Նախիջևանի, այսինքն՝ սարապարաբնակ երկու շրջանների միջև։ Այս առթիվ ուշադրավ են տեղի հին հնդեվրոպական ծագմամբ աշխարհագրական անվանումները, որոնցից այստեղ կանգ կառնենք* Վարդամարգ *գետանվան վրա։ Հնում այդպես էր կոչվում Արաքսի աջակողմյան վտակներից մեկը՝ այժմյան Ղըրխ-բուլաղ-չայ գետակը*[40]*։* Վարդամարգ *դետանվան* վարդ- *բաղադրիչը, մեր կարծիքով, նույնական է* Վարդաւառ *անվան,* Թաղավարդ *և* Եղվարդ *տեղանունների,* Շաղվերդ *գետանվան համապատասխան բաղադրիչների հետ։ Իսկ վերջիններս, ըստ Գ. Ղափանցյանի, ներկայացնում են դրափոխության ենթարկված ձևերը նախնական* *վադր-*ի*[41]*։*

Վարդաւառ *անվան ստուգաբանության առթիվ նա գրում էր. «Ի նկատի ունենալով, որ խեթերեն լեզվում կա* vadar *«ջուր» և* arr *բայը «լվանալ, ցնցղել» իմաստով, ես մեր* vardawarr *(=Վարդաւառ) անունը համարում եմ փոքրասիական խեթական, կազմված* vadr>vard *«ջուր» բառից, ուր հին* dr *դառնում է* rd, *որ տեսնում ենք և* արտասուք, Լիրտն *և նման բառերի ծագման դեպքերում, և* arr- *բայարմատից, իսկ միջի* «aw» *(կամ* «ււ»*) հնչյունահավելումը խեթերենում հաճախ է տեղի ունենում»*[42]*։*

---

36 *Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 41։*

37 *Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. I, էջ 344։*

38 В. И. Георгиев, *նշվ. աշխ., էջ 118, 120։*

39 Եղն-ա-խաղ *լեռնանվան վերջին բաղադրիչը, հավանաբար, նշանակում է «սար, ժայռ» (որով՝* Եղն-ա-խաղ – Եղն-ա-սար*)։ Հմմտ. նրանից կրկնաբանությամբ ստացված* խաղխաղ *(«խութ, ժայռ, ապառաժ, քարափ») բառը, որը, Գ. Ջահուկյանի կարծիքով, բխում է հ.-ե.* *kal- *«կարծր, պինդ» արմատից* (Г. Б. Джаукян, *նշվ. աշխ., էջ 109)։*

40 *Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 82—83։*

41 Гр. Капанцян, *նշվ. աշխ., հ.* I, Ереван, 1954, *էջ 335, 337։*

42 *Գր. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, էջ 125։ Այս նույն դրափոխությունը* (-dr->-rd->րտ-) *արձանագրված է նաև հին հայկական ուրիշ չատ տեղանուններում։ Հիշենք դրանցից եւ երկուսը՝ Վանա լճի* Արտի *կղզու և ուրարտական* Արդինի *քաղաքի ու երկրի (Հայկական լեռնաշխարհի ծայր հարավում) անունները։ Անտարակույս, սրանցից առաջինը ծագումնաբանական աղերս ունի հին հնդկ.* adri- *«սար, ժայռ» և իլիր.* adri- *«ժայռ, խութ» բառերի հետ, ուրեմն և նախապես ունենալու էր* *Adri *(>*Ardi>*Արտի*) տեսքը։ Հավանաբար, նույնը կարելի է ասել նաև երկրորդի՝* Արդինի *քաղաքանվան (երկրանվան) վերաբերյալ, եթե միայն* Ardini<Ardi-ni *(վերջին բաղադրիչի համար հմմտ.* Բչ-նի, Արգ-նի, Խոժոռ-նի, Պար-նի, Գառ-նի *և այլն)։ Նման ստուգաբանության հավանականությունը հաստատվում է ինչպես Արդինի (Մուսասիր) երկրի, այնպես էլ նրա մայրաքաղաքի բարձրալեռնային դիրքով։*

Բանն այն է, սակայն, որ հ.-ե. *uedur «գետ, ջուր» (<*ued— «թրջել, հոսել»)[43] բառից ծագած նույնիմաստ բառերի հանդիպում ենք ոչ միայն խեթերենում, այլ նաև հ.-ե. մյուս լեզուներում (հմմտ. հայ. գետ. ճուն. ὕδωρ, հին հնդկ. udra, փռյուգ. βεδυ, ռուս. вода «ջուր», հին իսլ. vátr «խոնավ» և այլն)[44]։ Պետք է նկատի առնել նաև այն հանգամանքը, որ այս արմատից ծագած բառերը հայերենում հ.-ե. u-ի դիմաց հանդես են բերել ինչպես գ, այնպես էլ վ (ւ), ինչին ականատես ենք նաև ուրիշ դեպքերում (հմմտ. միևնույն արմատի զույգ տարբերակներից սերած հայերեն հետևյալ բառերը. արեգ և արեւ, կոգի և կով, հոգի և հով և այլն)։ Այս առումով ուշագրավ է հատկապես հին հայկական Նվարդ (Նուարդ<*Նու-ւարդ) դիցանունը։ Ըստ երևույթին, դիցանվան Նու- բաղադրիչը հայերեն նու (<հ.-ե. *snuso-)[45] «հարս» բառն է, որով դիցանունն ամբողջությամբ ստանում է «հարս գետի» կամ «հարս ջրի» («ջրահարս») իմաստը։ Այսպիսի ստուգաբանության առթիվ հիշենք, որ, համաձայն հին հայկական առասպել-ավանդազրույցների, Նվարդը կինն էր Արայի՝ բնության զարթոնքի մեռնող-հառնող հին հայկական աստվածության[46]։

Ըստ երևույթին, Վարդամարգ դետանվան քննարկվող բաղադրիչի մեկ ուրիշ զուգահեռն է ընկած հյուսիսկովկասյան Վարդանէս դետանվան հիմքում (հնում այդպես էր կոչվում այժմյան Կուբան գետը)[47]։ Պտղոմեոսն այն բերում է Οὐαρδάνης տեսքով (*<Uardanēs, հմմտ. նույն դետանվան լատին. Vardanae ձևը)[48]։ Հավանաբար, սրանից անբաժանելի է Հեսիքիոսի ավանդած հայերեն 'Αρτάνη «աղբյուր» բառը[49], եթե միայն վերջինիս համար հիմք է ծառայել *Ϝαρτάνη (=uartanā) նախաձևը։

Վարդամարգ (Վարդ-ա-մարդ) գետանվան վերջին բաղադրիչը կարող է նույնածագում լինել Դանուբի հարավսլավական վտակներից մեկի (այժմյան Մորավայի) հին Margis, Μάργος (Βάργος) և լեհական Mroga գետանուններին հետ։ Սրանցից առաջինին Դ. Դեչևը վերագրում է թրակյան կամ իլլիրական ծագում՝ բխեցնելով հ.-ե. *mer(e)gh- («թրջել, հոսել, հորձանք տալ») արմատից[50], իսկ Վ. Գեորգիևը՝ թրակյան ծագում, լեհական դետանվան հետ միասին բխեցնելով հ.-ե. *morg- «ճահիճ» արմատից[51]։ Նկատի առնելով Արարատյան դաշտի արաքսամերձ աջափնյակի ճահիճները (դրանք գոյություն ունեին նաև հնում), Վարդամարգ դետանվան -մարգ բաղադրիչին

---

43 Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 13։

44 М. Фасмер, նշվ. աշխ., հ. I, էջ 330։

45 Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. III, Երևան, 1977, էջ 466—467։

46 Մ. Խորենացի, էջ 63։

47 «Աշխարհացոյց»-ում՝ Վալդանէս, որը ուղղելի է *Վարդանէս (Ուարդանէս) Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 75)։

48 Ptol., V, 8, 2.

49 Հմմտ. նաև դրդան-ք («գետի հոսանք, հորձանք, պտույտք») բառը։ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. I, էջ 605։

50 Д. Дечев, Характеристика на тракийския език, София, 1952, էջ 24։

51 В. И. Георгиев, նշվ. աշխ., էջ 257։ Հմմտ. նաև հայ. մարգ (մարգագետին) <միջին պարս. *marg (=ավեստ. marəγa «մարգագետին»)։ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. III, էջ 275—276։

պետք է վերագրել հենց «ճահիճ» իմաստը, գետանունն ամբողջությամբ ստուգաբանելով որպես «ճահճոտ գետ» («ճահճոտ ջուր»)[52]։

Արարատյան դաշտի հնագույն բնակչության մեջ հնդեվրոպական-վաղհայկական ծագմամբ էթնիկական տարրի առկայության մասին է, մեր կարծիքով, խոսում նաև ուրարտական արձանագրություններից հայտնի տեղական Lվարշա (I-ú-ár-šá-a) դիցանունը[53]։ Ըստ երևույթին, նրա հիմքում ընկած է հ.-ե. *u̯ers- («անձրև, ցող») բառը, որից են ծագում նաև հին հնդկ. varsá- «անձրև», խեթ. warša «տեղատարափ, անձրև», հուն ἕρση (<*Fερσα) «ցող, խոնավություն» և այլն։ Ենթադրվում է, որ հ.-ե. այս նույն բառն է առկա նաև փոյուգական Λιτυερσας (<Lit-u̯ers-as) դիցանվան մեջ[54]։ Հ.-ե. այս բառը հայերենում օրինաչափ կերպով վերածվելու էր *վարշ-ի (ւարշ-ի) կամ *զարշ-ի։ Սրանցից առաջինը, որպես առանձին բառ պահպանված չլինելով հանդերձ, առկա է Վարշակ տեղանվան և Ճուարշ (Ճուարշոոտ) դետանվան մեջ։

Հայտնի է, որ հին հայերը Վարշակ էին կոչում Տատեոն ավանին (այժմյան Դիադինին) մերձ ջերմուկների վայրը[55], երբ Վարշակ<*վարշ-ակ։ Իսկ Ճուարշ գետանունը՝ այժմյան Աղ-չայի (հյուսիս-արևմտյան Իրանում)[56] հին հայկական անունը, կարելի է տրոհել ճի- և -ւարշ բաղադրիչների. *ճի-ւարշ>Ճուարշ (Ճվարշ)։ Ուրեմն, դետանվան վերջին բաղադրիչը հ.-ե. *u̯ers-ից սերած վերոհիշյալ բառն է, իսկ առաջինը՝ ճի-ն, պետք է բխեցնել հ.-ե. *gʷ hēi, կամ *gʷ həi- նախաձևից (վերջինիցս են սերած համարվում հուն. φαιὸς φαιός «փայլուն, պայծառ, լուսե» և հին պրուս. gaylis «սպիտակ» բառերը)[57]։ Ըստ այսմ, *ճի-ւարշ>Ճուարշ նշանակելու է «հստակ ջուր» կամ դրան մոտ իմաստով մեկ ուրիշ բան։ Գետանվան նման ստուգաբանության հավանականության օգտին է խոսում ինչպես գետի ջրերի հստակության հանգամանքը (դրանք առավել հստակ են նրա վերին հոսանքի շրջանում), այնպես էլ նրա ներկայիս Աղ-չայ (<թյուրք. Ակ-չայ «Սպիտակ գետակ») անունը։ Այս առթիվ հիշենք նաև, որ գետի վերին հոսանքի շրջանի բնակավայրերից մեկը այժմ կրում է Աղբուլաղ (<թյուրք. Ակ-բուլակ «Սպիտակ աղբյուր») անունը։

Ամենայն հավանականությամբ, հանձինս Շարայի զարմերի գործ ունենք հնդեվրոպական-վաղհայկական այն ցեղերի բանահյուսական անձնավորումների հետ, որոնք սարապարների գլխավորությամբ կազմում էին մեկ ցեղամիություն՝ «սարապարական» կամ «Շարայի» ցեղամիությունը։ Վերոշարադրյալը թույլ է տալիս պնդելու, որ դրանք լինելու էին հնագույն բնակիչները Շարայի և նրա զարմերի տիրույթների՝ հետագա Մեծ Հայքի Շիրակ;

---

52 Հմմտ. գրեթե նույնիմաստ մor (մաւր) բառը որպես բաղադրիչ Բոլոմor, Սուրցամor, Խոզմor, Մեծամor (վերջին երկուսը Արարատյան դաշտի ձախափնյակում) գետանուններում։

53 Այս ատովածության տեղական ծագման վերաբերյալ տե՛ս Н. В. Арутюнян, Новые урартские надписи, Ереван, 1966, էջ 17, 94։

54 В. П. Нерознак, Палеобалканские языки, էջ 150։

55 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 85։

56 Նույն տեղում, էջ 64։

57 В. Н. Топоров, Прусский язык, словарь, Е—Н., М., 1979, էջ 132։ Այստեղ պետք է նկատի առնել *gʷhēi(*gʷhəi-)* >*ջի->ճի- (վերջինս բարբառային արտասանության՝ մը) անցման հնարավորությունը։

Արշարունիք, Աշոցք, Տաշիր, Ջավախք, Կանգարք, Կողբ (Կողբոփոր), Ծոբ (Ծոբոփոր), Զոր (Զորոփոր) գավառների, ինչպես նաև Շարուր-Նախիջևանի ու, թերևս, վերջինիս և Շիրակ-Արշարունիքի միջև տարածված Արարատյան դաշտի։

Որ իսկապես «Շարայի ցեղամիության» (šara- -յանների կամ սարապարների ալխավորած ցեղերի միության) բնակչությունը գերազանցապես հնդեվրոպական-վաղհայկական ծագում ուներ, երևում է նաև նրանից, որ ավելի ուշ՝ մ. թ. ա. IV—III դդ., հենց այդ տարրն էր ներկայացնում Երվանդունիների Այրարատյան թագավորության կենտրոնական գավառների (Արարատյան դաշտ, Շիրակ-Արշարունիք, Շարուր-Նախիջևան) բնակչությունը, ինչպես նաև ծայրամասայինների գերակշիռ մասը։

Նախկին «Շարայի ցեղամիության» տարածքը շատ վաղ ժամանակներում Երվանդունիների Այրարատյան թագավորության մեջ ընդգրկված լինելու պատմական իրողությունն էր արտացոլում հին հայկական ավանդաղրույցների «Արմավիրյան շարքը»՝ Շարայի ծնունդը դնելով Արմավիրում[58]։ Հիշենք, որ նույն բախտին էր արժանացել նաև Գեղամը՝ սևանամերձ Գեղաքունի (ուրարտ. Uelikuni, Uelikuḫi) երկրի և տեղական գեղ (uel- ցեղի էպոնիմը[59]։ Իսկ «Շարայի ցեղամիության» նման «Գեղամի ցեղամիությունը» ևս (վերջինիս միջուկը կազմում էին հետագա Մեծ Հայքի Սյունիք և Արցախ նահանգները)[60] մ. թ. ա. IV դ. սկսած մասն էր կազմում Երվանդունիների Այրարատյան թագավորության։

Երվանդունիների գերիշխանության տակ խնդրո առարկա շրջանների (և ոչ միայն դրանց) բնակչությունը իր վերջին քայլերն արեց միասնական հայ ժողովրդի կազմի մեջ ընդգրկելու ճանապարհին[61]։ Պատահական չէ, որ նրանց արքայատոհմի անկմանն հաջորդած ժամանակաշրջանի՝ մ. թ. ա. II դ., Հայաստանի բնակչությանը Ստրաբոնը բնութագրում էր «միալեզու» (ὁμόγλωττος բառով[62]։ Իսկ այդ ժամանակաշրջանի Հայաստանը՝ Արտաշիսյան Մեծ Հայքը, որի սիրտը նույն Արարատյան դաշտն էր, ներառում էր թե՛ Շիրակ-Արշարունիքը, թե՛ Շարուր-Նախիջևանը, թե՛ նրանց շրջակա բոլոր հողերը։

58 Մ. Խորենացի, էջ 39—40։

59 Նույն տեղում, էջ 41։

60 «Գեղամի ցեղամիության» հարավային թևն էին ներկայացնում ստրաբոնյան գուրանիացիները՝ հետագա Սյունիքի հարավում։

61 Բնականաբար, թե Շարան («Շարայի ցեղամիության» էպոնիմը), թե Գեղամը («Գեղամի ցեղամիության» էպոնիմը) հին հայկական ավանդաղրույցներում ասված են Հայկի՝ հայության ընդհանուր էպոնիմ-նախնու (էթնարխ), սերունդների շարքը (Մ. Խորենացի, էջ 39—41)։

62 Strabo, XI, 14, 5.

«ПЛЕМЕННОЙ СОЮЗ ШАРА» НА СЕВЕРО-ВОСТОКЕ АРМЯНСКОГО НАГОРЬЯ (VI—V вв. до н. э.)

САРГИС ПЕТРОСЯН

Резюме

Центр сарапарского союза индоевропейских племен находился в историческом Шираке. Как видно из древнеармянских эпических ска-

заний, *Шара,* потомок этнарха армян Хайка, был эпонимом Ширака и и его древних жителей (Хоренаци, 1, 12); ср. этноним сарапаров Σαράπαρας < *šara-par (где- par из и.—е. *per- „родить“ или *pu̯er- „сын, мальчик“).

Вероятно, индоевропейское происхождение имеют как гидронимы *Արփա* < *ar-ra „водная глубь“ (из и.—е. ār-„вода“, ср. потамоним Ἄρπασος в древней Армении) и *Վարդամարդ* „болотистая река“ (где *u̯adr —и.—е. *u̯edūr „вода, река“, а *marg < и.—е. morg- „болото“), так и оронимы *Արագած* < *ragat „рогатый“ (из и.—е *rag— „рог“, ср. русск. *рог-ат*-ый) и *Արտին* < *dren „олень“ (ср. фрак. л. и. Δρενις = = албан. dręnl „олень“).